ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 02, 31.01.2024թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 29.12.2023թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-52/01L**)՝ Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների, առանձին իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ունեցած դրամական պահանջները (գույքային իրավունքները) ՀՀ կառավարությանը զիջելու նպատակով պայմանագրի կնքման վերաբերյալ:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102-52/01L
Դաս: ԾԳ
«29» դեկտեմբերի 2023թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՍՏԵՂԾԱԾ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ, ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՈՒՆԵՑԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ (ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՋԻՋԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետը՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների, առանձին իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ Բանկի ունեցած և ՀՀ կառավարության 29.12.2023թ.-ի թիվ 2326-Ն որոշմամբ հաստատված ընտրանքի չափանիշներին համապատասխանող 4,617,320,463 (չորս միլիարդ վեց հարյուր տասնյոթ միլիոն երեք հարյուր քսան հազար չորս հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով ընդհանուր ակտիվները, այդ թվում՝ 3,787,189,810 (երեք միլիարդ յոթ հարյուր ութսունյոթ միլիոն մեկ հարյուր ութսունինը հազար ութ հարյուր տասը) ՀՀ դրամ գումարով Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների կողմից թողարկված պարտատոմսերում ներդրումները և 830,130,652 (ութ հարյուր երեսուն միլիոն մեկ հարյուր երեսուն հազար վեց հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ գումարով ընտրանքի չափանիշներին համապատասխանող վարկերի մնացորդները 3,232,124,000 (երեք միլիարդ երկու հարյուր երեսուներկու միլիոն մեկ հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ արժեքով Հայաստանի Հանրապետության կառավարությանը փոխանցելու նպատակով կնքել պայմանագիր:

2. Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների կողմից թողարկված պարտատոմսերում ներդրումների գումարից 1,136,156,943 (մեկ միլիարդ մեկ հարյուր երեսունվեց միլիոն մեկ հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ գումարը, և 830,130,652 (ութ հարյուր երեսուն միլիոն մեկ հարյուր երեսուն հազար վեց հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ վարկային պորտֆելի գծով 29.12.2023թ.-ի դրությամբ ձևավորված պահուստի և անհուսալի դասակարգման համար անհրաժեշտ պահուստի տարբերության գումարը ճանաչել վնաս:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Գրիգոր Հովհաննիսյան